ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 1 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղ. Հայկազ Մանուկյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Հայկազ Մանուկյանը 19.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ քաղ. Հ. Մանուկյանի անհատական դիմումով գործի

քննությունը ենթակա է մերժման, քանի որ նշված դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումը /09.04.2007թ. ՍԴՈ-690 որոշման եզրափակիչ մասի 2-րդ և 4-րդ կետեր/, ուստի բացակայում են գործը քննության ընդունելու օրենքով սահմանված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Հայկազ Մանուկյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

1 մարտի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-7